Ֆելիքս Հարությունյանը ծնվել է երաժիշտների ընտանիքում: 5 տարեկանից սկսել է ջութակ նվագել: 14 տարեկանից հնագույն երաժշտության «Շարական» անսամբլի մենակատար է, որի հետ ձայնագրել է սկավառակ, ելույթ է ունեցել Հայաստանում, Սլովենիայում, Ավստրիայում:
Սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ պրոֆեսոր Ալեքսանդր Կոսեմյանի դասարանում: Ներկայումս ուսումը շարունակում է Գրացի Երաժշտության և արվեստի համալսարանում՝ պրոֆեսոր Դոմինիկա Ֆալգերի դասարանում: Ուսանել է նաև բարոկկո ջութակ և աուտենտիկ կատարման արվեստ:
Որպես մենակատար՝ ելույթներ է ունեցել Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Արցախի պետական կամերային նվագախմբի հետ:
Մենահամերգներով հանդես է եկել Մալթայում, Փարիզում, Վիեննայում, Երևանում և այլուր:
Համագործակցել է մի շարք նվագախմբերի հետ՝ Tonkünstler-Orchester, Wiener Symphoniker, Allegro Vivo Academy, recreation – grosses Orchester Graz:

Մրցանակներ՝

- 1-ին մրցանակ և Ժան Տեր-Մերկերյանի անվան հատուկ մրցանակ («Վերածնունդ» մրցույթ-փառատոն, Գյումրի, 2013թ.):
- 1-ին մրցանակ («Վաշա Պրժիհոդա» ջութակահարների 6-րդ միջազգային մրցույթ, Չեխիա, 2017թ.):
- 1-ին մրցանակ («Մալթայի միջազգային երաժշտական մրցույթ», 2018թ.):